ԲՄԿ ՊՈՒՀ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաջյան
_____
«04» հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ(ներ)՝ ավագ դասախոս, Հազրոյան Ռ.Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Դատական պաշտպանության իրավունքի հիմնախնդիրները

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.02.7 «Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն»

Դասիչ մասնագիտություն՝042101.00.7 Իրավագիտություն

ԲՄԿ ՊՈՒՀ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

1. Ներածություն

«Դատական պաշտպանության իրավունքի հիմնախնդիրները» դասընթացը մագիստրատուրայի ուսումնական ծրագրի առարկաներից է: Այն բարձրագույն իրավաբանական կրթության առարկաների համակարգում զբաղեցնում է առանցքային տեղ:

«Դատական պաշտպանության իրավունքի հիմնախնդիրները» դասընթացի շրջանակում ուսանողները կուսումնասիրեն.

- Դատական պաշտպանության իրավունքը որպես հիմնարար սահմանադրական իրավունք, դրա տեղն ու դերը մարդու իրավունքների պաշտպանության համակարգում;
- Դատական պաշտպանության իրավունքի ամրագրումը ՀՀ Սահմանադրությունում, օրենքներում, ներպետական և միջազգային իրավական ակտերում;
- Դատական պաշպանության իրավունքի սուբյեկտներն ու օբյեկտները՝ Դատական պաշտպանության իրավունքի կրողները, պաշտպանվող իրավունքների և օրինական շահերի շրջանակը:
- Դատարան դիմելու և դատական պաշտպանության իրականացման երաշխքները՝ դատարանի հասանելիություն, անկախ և անաչառ դատարան, արդյունավետ դատական պատպանության միջոցներ;
- Դատական պաշտպանության իրավունքի իրացման գործընթացում առաջացող հիմնախնդիրներ՝ դատավարության ձգձգում, ձևական մոտեցումներ, դատական ակտերի կատարման խնդիրներ;
- Դատական պաշտպանության ձևերն ու միջոցները՝ դատական պաշտպանության տեսակները, իրավունքի վերականգնման և պաշտպանության դատավարական միջոցները;
- Արդյունավետ պաշտպանության գնահատման տեսական և գործնական մոտեցումները;
- Փաստաբանի վարքագծի կանոններ;
- Դատական պաշտպանության ընթացքում իրավունքի չարաշահում:
-

Դասընթացի նպատակը և խնդիրները: Դասընթացի նպատակն է դատական պաշտպանության իրավունքի տեսական և գործնական հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրությունը՝ նպատակ ունենալով ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ դատական պաշտպանության իրավունքի բովանդակության, դրա իրականացման մեխանիզմների, ինչպես նաև ազգային և միջազգային դատական պաշտպանության համակարգերի փոխհարաբերության, դատական պաշտպանության ընթացքում առաջացող թե սուբյեկտիվ և թե օբյեկտիվ հիմնախնդիրների, թույլ տրվող թերությունների, օրենսդրական կարգավորումների և բացերի և դրանք հաղթահարելու ուղիների վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները:

Դասընթացի ընթացքում նախատեսվում է՝

- ✓Բացահայտել դատական պաշտպանության իրավունքի իրավական էությունը, նշանակությունն ու տեղը մարդու իրավունքների պաշտպանության համակարգում;
- ✓Ուսումնասիրել դատական պաշտպանության իրավունքի նորմատիվ հիմքերը՝ ազգային և միջազգային իրավական կարգավորումներում;
- ✓Ներկայացնել դատական պաշտպանության իրավունքի սուբյեկտների և պաշտպանվող իրավունքների շրջանակը;
- ✓Վերլուծել դատական շպաշտպանության ձևերն ու միջոցները
- ✓Ուսումնասիրել դատական պաշտպանության իրավունքի իրացման ընթացքում առաջացող հիմնախնդիրները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները;
- ✓Զարգացնել դատական պրակտիկայի վերլուծութան և իրավական փաստարկման հմտությունները
- ✓Ուսումնասիրել փաստաբանների վարքագծի կանոնները, փաստաբանական գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջները:

2.1. Կրթական վերջնարդյունքները: Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

- դատական պաշտպանության իրավունքի իրավական էությունը, նշանակությունն ու տեղը մարդու իրավունքների պաշտպանության համակարգում;
- դատական պաշտպանության տեսակներն ու ձևերը;
-դատական պաշտպանության առանձնահատկությունները քաղաքացիական, վարչական և քրեական գործերով
-փաստաբաններին ներկայացվող պահանջները, վարքագծի կաննոները, որոնց վերջիններս պարտավոր են հետևել;
- դատական պաշտպանության ոլորտում առկա խնդիրներն ու բացերը դրանց հաղթահարման ուղիները;
- դատական պրակտիկան:

կարողանա՝

- ◆ Իրավական հարցերի վերաբերյալ տալ մասնագիտական գնահատական.
- ◆ Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնականում.
- ◆ Ինքնուրույն կատարելագործել մասնագիտական հմտությունները՝ հաշվի առնելով օրենսդրության, տեսության և պրակտիկայի զարգացումը.

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքների տեսակները	**Ամբողջը, ակ. ժամ.**	**Բաշխում ըստ կիսամյակների**					
		1 Կիս	**2 Կ**	**3 Կ**	**4 Կ**	**5 Կ**	**6 Կ**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**
Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**144**						
Լսարանային պարապմունքներ:	32						
Դասախոսություններ	16						
Լաբորատոր աշխատանքներ							
Սեմինարներ	**16**						
Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**85**						
քննություններին նախապատրաստում							
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**						

2.3. Առարկայի ծավալը՝ 144 ժամ, կրեդիտ՝ «4» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**

Թեմա 1. **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**8**	**4**	**4**
Թեմա 2. **ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**	**8**	**4**	**4**
Թեմա 3. **ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**	**8**	**4**	**4**
Թեմա 4. **ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ**	**8**	**4**	**4**
Ընդամենը	**32**	**16**	**16**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ԹԵՄԱ 1. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին կետի կիրառելիության ընդհանուր պայմանները

(a) «Վեճ» հասկացությունը
(b) Վիճարկվող իրավունքի ճանաչումը ազգային օրենսդրությամբ
(c) Իրավունքի «քաղաքացիական» բնույթը
(d) Մասնավոր անձանց իրավունքներ. նյութական գնահատում

2. Կիրառելիություն վեճերի այլ տեսակների նկատմամբ

3. Հոդված 6-ի կիրառելիությունը հիմնական գործընթացներից բացի այլ գործընթացների վրա

4.Հարցեր, որոնք դուրս են կիրառման շրջանակից

ԹԵՄԱ 2. ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Դատական պաշտպանության հասանելիության իրավունք

(a) Իրավունք, որը իրական է և արդյունավետ
(b) Սահմանափակումներ

2. Դատական պաշտպանության իրավունքից հրաժարում
   (a) Սկզբունքներ
   (b) Պայմաններ
3. Անվճար իրավաբանական օգնություն
   (a) Անվճար իրավաբանական օգնության տրամադրում
   (b) Տրամադրված իրավաբանական օգնության արդյունավետություն

ԹԵՄԱ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. «Դատարան» հասկացությունը
   (a) Ինքնուրույն (ավտոնոմ) հասկացություն
   (b) Իրավասության մակարդակը
   (c) Վճռի վերանայում դատարանի կողմից, որն ունի լիարժեք իրավասություն
   (d) Դատական ակտերի կատարում
2. Օրենքով ստեղծված լինելու պահանջ
3. Անկախություն և անաչառություն
   (a) Ընդհանուր դրույթներ
   (b) Անկախ դատարան
   (c) Անաչառ դատարան

ԹԵՄԱ 4. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Արդար դատաքննություն
   (a) Ընդհանուր սկզբունքներ
   (b) Կիրառման ոլորտ
   (c) Չորրորդ ատյան
   (d) Մրցակցային դատավարություն
   (e) Կողմերի հավասարություն
   (f) Ապացույցների օգտագործման կարգավորում
   (g) Դատական ակտերի հիմնավորվածություն
2. Գործի հրապարակային քննություն
   (a) Գործի քննություն
   (b) Դատական ակտի հրապարակում
3. Գործի քննության տևողություն
   (a) Դատաքննության տևողության որոշում
   (b) Հիմնավորված ժամկետի պահանջի գնահատում

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Principles of Effective Judicial Protection (Council of Europe materials) (https://www.elgaronline.com/edcollchap/edcoll/9781789905410/9781789905410.00012.xml)
2. Թորոսյան, Գ., Թորոսյան, Ս. Իրավունքի չարաշահում, Եր., «Հայրապետ» հրատ., 2019թ., էջեր 338-339:
3. Harris, O'Boyle and Warbrick- Law of the European Convention on Human Rights, Published in the United States by Oxford University Press, New York, 2009,332 p.
4. Clayton, R., Tomlinson, H. Fair Trial Rights. Oxford: Oxford University Press, 2001.
5. Cappelletti, M., Garth, B. Access to Justice. Milan: Giuffrè, 1978–1979.
6. Council of Europe. Guide on Article 6 of the European Convention on Human Rights (Right to a fair trial). Strasbourg: European Court of Human Rights, 2025.
7. Лазарев Л.В., Право на судебную защиту. Москва: Норма, 2003.
8. Бондарь Н.С., Судебная защита прав и свобод человека. Москва: Норма, 2006.
9. Туманов В.А., Европейский суд по правам человека. Москва: Норма, 2001, 304 с.
10. Комментарий к Европейской конвенции о защите прав человека, под ред. В.А. Туманова. Москва: Норма, 2002, 335 с.

Լրացուցիչ՝

<u>բ) Նորմատիվ իրավական ակտեր</u>

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
2. ՀՀ Սահմանադրություն
3. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ
4. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ
5. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր
6. Փաստաբանության մասին ՀՀ օրենք
7. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք
8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
9. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

գ)Ինտերնետային կայքեր

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am
4. www.court.am
5. www.datalex.am
6. www.hudoc.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար
Հարցաշար

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 6-ի 1-ին կետի կիրառելիության ընդհանուր պայմանները: «Վեճ» հասկացությունը
2. Վիճարկվող իրավունքի ճանաչումը ազգային օրենսդրությամբ
3. Իրավունքի «քաղաքացիական» բնույթը
4. Մասնավոր անձանց իրավունքներ. նյութական գնահատում
5. Կիրառելիություն վեճերի այլ տեսակների նկատմամբ
6. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 6-ի կիրառելիությունը հիմնական գործընթացներից բացի այլ գործընթացների վրա
7. Հարցեր, որոնք դուրս են կիրառման շրջանակից
8. Դատական պաշտպանության հասանելիության իրավունք: Իրավունք, որը իրական է և արդյունավետ
9. Դատական պաշտպանության հասանելիության իրավունք: Սահմանափակումներ
10. Դատական պաշտպանության իրավունքից հրաժարում: Սկզբունքներ
11. Դատական պաշտպանության իրավունքից հրաժարում: Պայմաններ
12. Անվճար իրավաբանական օգնություն : Անվճար իրավաբանական օգնության տրամադրում
13. Անվճար իրավաբանական օգնություն: Տրամադրված իրավաբանական օգնության արդյունավետություն
14. «Դատարան» հասկացությունը: Ինքնուրույն (ավտոնոմ) հասկացությունը
15. «Դատարան»-ի Իրավասության մակարդակը:
16. Վճռի վերանայում դատարանի կողմից, որն ունի լիարժեք իրավասություն:
17. Դատական ակտերի կատարում
18. Դատարանի՝ օրենքով ստեղծված լինելու պահանջը
19. Դատարանի անկախություն և անաչառություն: Ընդհանուր դրույթներ
20. Դատարանի անկախություն
21. Դատարանի անաչառություն
22. Արդար դատաքննություն: Ընդհանուր սկզբունքներ
23. Արդար դատաքննություն: Կիրառման ոլորտ
24. Արդար դատաքննություն: Չորրորդ ատյան
25. Արդար դատաքննություն: Մրցակցային դատավարություն
26. Արդար դատաքննություն: Կողմերի հավասարություն
27. Արդար դատաքննություն: Ապացույցների օգտագործման կարգավորում
28. Արդար դատաքննություն: Դատական ակտերի հիմնավորվածություն
29. Գործի հրապարակային քննություն
30. Դատական ակտի հրապարակում

31. Գործի քննության տևողություն: Դատաքննության տևողության որոշում
32. Գործի քննության տևողություն: Հիմնավորված ժամկետի պահանջի գնահատում

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքերի արդյունքում: